

ՏՈՍՆԵՐՈՐԻ ՏՈՐԻ

ՄՇԽԿ

Տարեկան դիմը 10 րուր, կես տարվանը 6 րուր:
Առանձին նամակները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի նամակները մէջ:

Օտարապաշտոնի գիտնական են ուղղակի
Դիմումները. Редакция «Мшак»

Նամակները պետք է առաջարկվեն 10—2 մամ
(Բացի կիրակի և առաջ օրերից):

Յայտարարումները ընդունվում են ամեն լիցիտով:

Յայտարարումները համար գնումում են
կարգադրվում 2 կոպեկով:

ԲՈՎԱՆԳԱՆՈՒԹԻՒՆ

Մի նշանաւոր խնդիր.— Ներքին ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ: Նշանակ երեւոյթ: Նշանակ խնդիրներ:
Նշանակ խնդիրներ: Նշանակ խնդիրներ: Նշանակ
ՏԵՍՈՒԹԻՒՆ: Թիֆլիս: Անգլիա: Ֆրանսիա:
Արտաքին խնդիր.— ՏԵՍՈՒԹԻՒՆ: ՏԵՍՈՒԹԻՒՆ:
ԲՈՎԱՆԳԱՆՈՒԹԻՒՆ: Մասկով:

ՄԻ ՆՇԱՆԱՌՈՐ ԽՆԴԻՐ

Մշակի՝ ներքին համարում տղամ է երեւոյթ
երեւոյթ ստացած մի նշանակ, որ խօսում է
մի շատ նշանաւոր խնդիր մասին, այն է
կալուածական խնդիր մասին:

Մենք հիմնականում մի թղթակցութեան
վրա, որ առաջին անգամ ջանում է պար-
զել կալուածական խնդիրը Անդրկովկասեան
երկրի հայերով ամենախիտ բնակեցրած մի
նահանգի մէջ, զիս ևս չենք կարող մեր
կողմից մի որ և է վճարողական միտք յայ-
տենել այդ նշանաւոր և կենսական խնդիր
մասին: Մենք պէտք է սպասենք որ խնդ-
րի մասին բազմակողմանի կերպով քննի,
մշակի և պարզի: Ինքն թղթակցից խոս-
տովանում է որ գուցէ նրա հոգեւորացած-
ները մէջ մասնաւոր սխալներ կարող են
լինել: Այդ պատճառով մենք հրաւիրում
ենք այլ անձանց, որոնք գուցէ աւելի տե-
ղեակ են, բայցաւորը գործը աւելի մանրա-
մասնաբար, որպէս զի մասնաւոր կարողանայ
այլ և այլ թղթակցութիւններից կազմել
իր գաղափարը և մշակել խնդիրը:

Ներքին թղթակցութեան պէս թղթակ-
ցութիւններ գրեւորական կալուածների, գիւ-
ղացիների և կալուածատերերի փոխադարձ
յարաբերութիւնների մասին երբեք չեն և-
ղել մեր ազգային մամուլի մէջ: Իսկ հոգի

կալուածական խնդիրը ամենանշանաւոր
խնդիր է մի երկրի անտեսական ապագայի
համար:

Անտես առնել այդ տեսակ խնդիրներ,
որոնք հիմք են կազմում նոյն իսկ ժողո-
վրդի, ազգի կենսութեան, նշանակում է ան-
տես առնել նոյն իսկ ժողովրդի կենսքը
նրա բոլոր բարոյական և մտաւորական ճեղ-
տումներով և արտայայտութիւններով:

Մի ազգի անտեսական կենսքից կախ-
ված է նրա մտաւոր և բարոյական կացու-
թիւնը: Մենք խօսում ենք անդադար կըր-
թութեան, դպրոցների, ազգի բարոյական
և մտաւոր զարգացման մասին: Բայց նոյն
իսկ այն դպրոցները, որոնք կազմում են
հայոց ազգի զարգացած մասի հոգեւորու-
թեան առարկաներից գլխաւորը, ի՞նչպէս
կը կարողանան գոյութիւն ունենալ, եթէ
ազգի անտեսական դրութիւնը ներկայում
լինի, կամ մշտապէս անորոշ և անցողական
դրութեան մէջ կը գտնվի, ի՞նչպէս այդ
դպրոցները գոյութիւն կունենան, եթէ, օ-
րինակի համար, կալուածատէրը կը քանդ-
վի, իսկ գիւղացին, թէ և անունով սեփա-
կանատէր կը դառնայ, բայց իրապէս
կախված կը լինի մի փաշառուէից, որի
ձեռքը հետզհետէ կանցնի գիւղացու հոգը
իր չը վճարված պարտքերի համար:

Մենք խնդրում ենք երեւոյթ մեր թղթ-
ակցութիւններին, և առհասարակ նրանց, որոնք
մասնագէտներ են իրաւաբանական հարցե-
րում, անընդհատ թղթակցութիւններով
բացատրել մեզ նահանգի կալուածական
խնդիր ետեւի:

Յաւախ է որ մեր իրաւաբաններից, հա-
մալսարանականներից ոչ մէկը երբեք չէ
մտածել այդ նշանաւոր, կենսական խնդրի
վրա թղթակցել մեր լրագրիւնների միջին:

Բայց անգամ և լազարեան արեւելեան լեզուաց
ճեմարանի պրոֆէսոր, պ. Էմին, իրան նպատակ
էր դրել ոչնչացրել հայկական ժամանակագիր
Մովսէս Խորենացուն, և նրա հետ միասին ներ-
կայումս գոյութիւն ունեցող հայ ժողովրդի պատ-
մութիւնը: Մովսէս Խորենացուն պ. Էմինը ցոյց
էր տալիս որպէս խաբէրայ, զիչ էր մնում որ-
պէս գրականական գոյ, որը իր ժամանակագրու-
թիւնը կազմելու միջոցին օգուտ էր քաղել
նրա խնդիրը, առանց ուղղակի աղբիւրները ցոյց
տալու:

Բանը նրանումն է, որ Մովսէս Խորենացին
անդադար յիշատակում է ասորեստանցի ժամանա-
կագիր Մարաբասին, որը, իր կողմից, նրա խնդ-
րի քաղումն էր Նինուէում գտնված պահարան-
ներից: Պ. Էմինի կարծիքով, Մովսէս Խորենա-
ցին շատ բաներին Մարաբասով մեկնութիւն
տալով, պարզապէս, անխիղճ կերպով սուտ
էր խօսում, որովհետեւ Մովսէս Խորենացու օրե-
րում թէ Մարաբասը և թէ Նինուէական արեւիկ-
ները վաղուց գոյութիւն չունէին, և, հետեւաբար,
ոչ մի տեղից օգուտ քաղել չէր կարելի:

Թէ պատմական ինչպիսի հիմունքների վրա
հասաւ պ. Էմինը իր նորանշան եղբայրացութիւն-
ներին— դժուար է որոշել: Բայց ներքին դէպքում
մէկ բան անկասկած է, այն է, որ պ. Էմինը
առ ինքն ևս չէր հասկանում, թէ ինչ էր ասում:
Ներքին եղբայրից մէկի հարցումներին, թէ կայ
արդեօք հայ ժողովրդի պատմութիւն, որովհետեւ
ոչնչացնելով Մովսէս Խորենացուն, պ. Էմինը
երկրի երեսից ջնջում է հայոց Նիստոք-ժամա-
նակագիրին, պ. Էմին բացականչեց. «Այո, հայ ժո-

խակ մեր միւս թղթակցները միշտ զբաղ-
ված էին դպրոցներով, հոգաբարձութեամբ և
հոգեւորականներով:

Թող չը մոռանան մեր թղթակցները
այն սկզբունքը, որ մենք հազար անգամ
յայտնել ենք: այն է որ ազգութեան գո-
յութեան գլխաւոր հիմքը հայրենիքն է
(հոյր) և մայրենի լեզուն:

Երբ որ առաջինը, հոյրը, անհաստատ
յարաբերութիւններ է ներկայացնում, իսկ
երկրորդը (լեզուն) կորած է, ինչքան էլ ազ-
գութիւնը պիտի պահի իր կրօնը, նա այլ
ևս ազգութիւն չի լինի, այլ կը լինի մի
կրօնական ազանդ միայն:

Այդ պատճառով մի ազգութիւն որ
հիմնվում է հոյրի վրա և ունի մի կենդա-
նի մայրենի լեզու,— մի և նոյն է ինչ կրօ-
նի և պատկանում է ի հարկէ կրօնը բարոյա-
կանացնող, կրթիչ, դաստիարակող միջոց-
ներից մին լինելով, պէտք է այդ իր պաշ-
տօնին համեմատ համար ունենայ բոլոր
հարկաւոր յատկութիւնները:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՄԱՆ ԵՐԵՒԱՆԻՑ

Մայիսի 20-ին

Այս րօպէս վճռվում է երեւոյթ նահա-
գում մի շատ նշանաւոր խնդիր, այն է կալուա-
ծական խնդիրը:

Նախ քան թէ խօսեմ գիւղացիների այժմեան
յարաբերութեան մասին դէպի կալուածատէրերը
և այն յարաբերութիւնների մասին, որոնք պէտք
է հաստատվեն նոր կալուածական և դեռ ևս չի-
րազորված, բայց պրօէկտ մէջ գտնվող օրէն-
քի մասին, պէտք է մի քանի խօսքով բացատ-

րել թղթի պատմութիւնը կայ, բայց միայն այլ
աղբիւրներով:

Յանկալի կը լինի որոշել հետեւալը. եթէ բա-
րոյ լուսաւորված աշխարհին յայտնի Մովսէս
Խորենացին սկզբից մինչև վերջը անխղճաբար
սուտ էր խօսում, ուրիշն ինչ երաշխաւորութիւն
կայ, որ պ. Էմինի ցոյց տուած ժամանակագրի-
րը գործին բարեխղճաբար են վերաբերվել: Հարց
ճազեցաւ, թէ արեւելից էր վերցնում Մովսէս Խո-
րենացին իր պատմագրութիւնները պ. Էմինի
կարծառօտ պատմաւրանքի՞ շնորհիւ լեզուական էպո-
սից: Շատ լաւ է: Լաւ է նրա համար, որ կարճ է,
իսկ կարճ է նրա համար, որ բոլորովին պարզ չէ,
ինչ կը վերաբերի մեզ, պ. Էմինից մենք շատ
բաւական ենք: Նրա ընթերցանութիւնը Մովսէս
Խորենացու մասին— արդարեւ հնազանդական հա-
զագիւտ երեւոյթ է:

Էմինից յետոյ կարգաւ պ. Բարսով, ժամանա-
կագիրներին հիման վրա ապացուցանելով, որ ա-
րեւելիները— եսասեր են, իսկ սկիւթացիք— փոխա-
գնեւ: Վերջ է վերջը, աւելացրեց պ. Բարսով,
կովկասի այժմեան օտերը հին արեւելիների սե-
րունդներն են, որոնց մասին էլ պ. Մանուկեան
յիշեց իր ընթերցանութիւնը:

Չը հակառակվելով պ. Բարսովին, կը յիշեց-
նենք նրան, որ արեւելիները կամ ազգանքները կով-
կասեան մեծ Գոսիի երկու կողմերն էին բնակ-
վում մինչև կասպեան ծովի արեւմտեան ափի
վերջը— այս առաջին, երկրորդ, կովկասեան մեծ
գոսիի այժմեան ազգաբնակչութիւնը խօսում է
35 լեզուներով և 40-ից մինչև անգամ աւելի
բարբառներով: հետեւաբար, հաստատել, որ օտե-

րեւ թէ ինչ գրութեան մէջ էր կալուածական
խնդիրը երեւոյթ նահանգում պարսից տիրապե-
տութեան ժամանակ և ինչ գրութեան մէջ գը-
տան ուսուցիչը այդ նահանգի կալուածները, երբ
տիրեցին երեւոյթ նահանգը:

Հողի սեփականութիւնը բացի ժառանգական
հողերից, որոնց վրա չը կար գիւղական ազգաբ-
նակութիւն, բոլորն էլ գիւղական համայնքի
սեփականութիւն էր: Արդեօք համայնքը (общин-
ное владение), հին հայոց, թէ պարսից հիմնաբ-
կութիւնն էր,— այդ ևս չեն յանձն տուում
վճարելու: Միայն այսքան գիտեմ, որ երեւոյթ
նահանգի բոլոր հողերը, որոնք բնակված էր
գիւղացին, թէ թվում է թէ մուսուլմանացի
հողերը համայնքի հողեր էին: Կալուածատէրը
թէ և իր հողի սեփականատէր էր, բայց նա չէր
կարող կտրել իր հողը, այլ միայն
ամբողջութեամբ, այսինքն կարող էր ծախել իր
կալուածական իրաւունքը ուրիշին: Նա իս-
կապէս տէր էր ոչ թէ հողի վրա, այլ հողի ար-
դիւնքի մի մասի վրա: Մուսուլման կալուածա-
տէրը ստանում էր կալուածի արդիւնքի 30 մա-
սից 4 մաս, իսկ թվականները 30 մասից 7
մաս:

Գիւղացիները մշակում էին հողը համայնքի
իրաւունքով և երեք տարին մի անգամ նոր բա-
ժիններ էին տնում իրանց մէջ: Բայց 1870 թվ-
սկսած, երբ մոցնովեցաւ Ռուստաւինայի գը-
րամօտաւ ասված օրէնքը, գիւղական իւրաքան-
չիւր ծուխին յատկացվեցաւ հողի մի յայտնի
բաժին, որ և պէտք է մշակել իւրաքանչիւր, ա-
ռանց փոփոխելու: Թէ և մուսուլման իրաւուն-
քը նոյնը մնաց:

Այժմ կազմված է Գլխաւոր կառավարութեան
մէջ մի յանձնաժողով, որ պէտք է մշակի նոր
յարաբերութիւնները գիւղացիների և կալուածա-
տէրերի մէջ: այժմ մշակվում է մի օրէնք, որի
գործութեամբ իւրաքանչիւր գիւղացին պէտք է
յետ գնի իր հողի կտորը կալուածատէրից:

Պարզ է որ նախ քան գիւղացին միջոց ու-
նենայ յետ գնել իր հողի կտորը կալուածատէ-
րից, պէտք է գնահատվեն հողերը: Եւ ահա
յանձնաժողովը բաժանել է երեւոյթ նահանգի
բոլոր հողերը երեք տեսակի վրա. հողերի սոսա-

րը— արեւելիների միակ սերունդներն են, կամ որ
օտերը և արեւելիները— մի և նոյն բաներն են, մի
և նոյնը կը լինի, եթէ մենք սկսեմք հաստա-
տել, որ Մովսէս Խորենացին և Նիկիտայոս Էմին
մի և նոյն անձնիք են: Համարձակվում ենք հա-
ւատացնել պ. Բարսովին, որ ներքին հանգամա-
նքում նոյնքան ուղիղ կը լինենք մեր ենթադրու-
թիւնների մէջ, որքան և նա իր ենթադրութիւն-
ների մէջ:

Կովկասը, անկասկած, ժողովրդի մի փե-
թակ է: Արեւելից դէպի եւրոպայ ժողովուրդնե-
րը մեծ զաղթականութեան ժամանակ, իւրաքան-
չիւր անցնող խումբը ճանապարհի վրա խորտա-
կէր իր մնացորդներին: Այդ պատճառով Կովկասի
սոսնակագրութիւնը զանազանակերպ և գոյնզգոյն
է: Հարկաւոր է նորագոյն և անգնադաւոր բաժա-
րելի լինել, Կովկասում բնակվող զանազանա-
ցիւր և զանազանաբան ժողովուրդների խումբը
կարգի դնելու: համար, եթէ պ. Բարսով չէ կա-
մնում, պրոֆէսոր Էմինի նման, պատմութեան
մասին կը չփոխվի, այն ժամանակ նա պարտա-
ւոր էր աւելի զգուշ խօսել:

Ժամի 10-ին թէ 11-ին հասարակութիւնը ցըր-
վեցաւ, խօսելով այն թշուառ վիճակի մասին,
որին ենթարկվեցաւ Մովսէս Խորենացին, և այդ
առարկայի առիթով պ. Էմինի նոր հեղինակու-
թեան մասին, որ շուտով լոյս կը տեսնի, եթէ
չեն սխալվում, Մովսէսի հնազանդական ընկե-
րութեան աշխատանքների մէջ:

ջին տեսակը յանձնաժողովը, որքան յիշում եմ, գնահատել է դեռ իսկ 50—52 բուրլու երկրորդ տեսակը 20—25 բուրլու, իսկ երրորդ տեսակը 20 բուրլուց ստոր: Եւ մեծ մասամբ գիւղացիներն յետ դնելը հեշտացնելու համար յանձնաժողովը յերանհան նահանգի հողերը գնահատել է երկրորդ տեսակի չափով, իսկ առաջին տեսակի գնով շատ փոքր թիւով հողեր է նշանակել, այն ինչ յերանհան նահանգում հողերը շատ սակաւ, շատ թանկ և շատ բերրի են, այնպէս որ այն հողերը, որոնց յանձնաժողովը գնահատել է 50 բուրլու դեռ իսկ, իսկապէս արժեն շատ անգամ 500 բուրլու դեռ իսկ: Գնահատութիւնը ուրեմն ահային է, ինչպէս տեսնում էք: Հողերի այդ տեսակ պակաս գնահատութիւնը, եթէ ընդունվի կառավարութիւնից, շատ մեծ վնաս կը տայ կալուածատէրերին: Նրանցից շատերը կատարելապէս կը քանդվեն, կաղաքատանա: Բայց մի և նոյն ժամանակ և այդ էժան գնահատութեամբ գիւղացիները հազիւ թէ կը կարողանան յետ դնել հողերը, առանց դիմելու մի որ և է փոխառութեան:

Այդ պատճառով կալուածատէրերը, որոնք այդ առաջարկութիւնը անարդար էին համարում, ուղարկեցին իրանցից մի պատգամաւորութիւն թիֆլիս: Նրանք ասում են. էժան թէ թանկ գնահատվին հողերը,— գիւղացին շատ դժուարութեամբ կը կարողանայ յետ դնել իր կտոր հողը, քանի որ կառավարութեան կողմից նրան գրամական օժանդակութիւն չէ տրվելու իր հողը յետ դնելու համար, այլ նա պէտք է յետ դնի իր սեփական միջոցներով: Եւ այդ պատճառով Գլխաւոր կառավարութեան յանձնաժողովը աշխատել է էժան գնահատել, Բայց չափից դուրս էժան գնահատելով հողերը, կալուածատէրերը կատարելապէս կը քանդվեն և այդ էժան գնով էլ գիւղացին չի կարողանայ յետ դնել իր հողը, սակայն կը լինի մի որ և է փողատիրոջ մօտ փոխառութիւն անել, կը դառնայ կալված այն մարդուց, որից փողը տոկոսով է ստացել և վերջը ինքն էլ կը քանդվի, որովհետեւ չի կարողանայ տոկոսները վճարել և ժամանակով գիւղացու հողը կանցնի վախճանութիւն: Կալուածատէրերը ասում են. համ մենք կաղաքատանաք, համ գիւղացին վերջը կը քանդվի,— իսկ հողերը կանցնեն հարուստ վաճառականների ձեռքը: Այդ պատճառով կալուածատէրերը առաջարկում են հետեւեալը: Երբեք յարմար չի կալուածքի երկու երրորդականը պատրաստ են առանց փողի, առանց վարձատրութեան վիճակը գիւղացիներին և այդ հողը կը դառնայ նրանց համայնքի սեփականութիւն, իսկ Վիլուածի մի երրորդականը թող մնայ որպէս կալուածատիրոջ սեփականութիւն: Եւ այդ ձեռով բաժանելը շատ հեշտ է անելու, քանի որ յերանհան նահանգի իւրաքանչիւր կալուածք բաժանված է ախչա ասված 6 հաւասար մասի վրա: Նպակով հողի մեծութեանը կամ փոքրութեանը անհան կարող է այլ և այլ հողերի մէջ համեմատարար մեծ կամ փոքր լինել, բայց մի կալուածի մէջ բոլոր վեց ախչաները միմեանց հետ հաւասար են: Գա ուրեմն մի իդէալական չափ է: Այդպիսով իւրաքանչիւր կալուածի 6 ախչայից, կալուածատէրերի առաջարկութեամբ, 2 ախչա պէտք է մնայ կալուածատիրոջ, իսկ 4 գիւղացիներին: Այդպիսով ոչ յետ դնել կը հարկաւորվէր, ոչ էլ կալուածատէրերը վտանգի մէջ կը լինէին աղքատանալու, ոչ էլ գիւղացին հարկաւորութիւն չէր ունենայ իր անձնական հողն սեփականութեամբ համար դիմել փոխառութեանը ահային տոկոսներով, որ նրան անպատճառ կը քանդէր, մի և նոյն ժամանակ գիւղացիները կրկին կ'ունենային համայնքի հողերը:

Եւ այդ հողային յարաբերութիւնները որքան կարողացայ բացատրեցի ձեզ: Գուցէ մի քանի սխալներ կան իմ բացատրութիւնների մէջ, բայց խնդրեմ այնքան նշանաւոր է մեր ամբողջ նահանգի համար, որ շատ ցանկալի կը լինէր, եթէ ինձանից աւելի մասնագէտները աւելի էլ մանրամասնաբար բացատրէին մասուլի մէջ այդ խնդիրը, մինչև կ'ոմիտային ձեռքով նրան վերջնական որոշում տալը:

Ցաւալին այն է որ Գլխաւոր կառավարութիւնը չը պահանջեց որ կալուածատէրերը իրանց ընտրած ներկայացուցիչներով մշակեն խնդիրը, կամ սկզբից ուղարկեն պատգամաւորներին, որոնք կարողանային մասնակցել կ'ոմիտայի:

աշխատանքներին, մանաւանդ աչքի առաջ ունենալով, որ մեր Անդրկովկասում դեռ ևս գէշմտված մտքած չէ:

Մ.

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 2-ին յունիսի

Այսօրվայ «Մշակ» 98 համարում կարգաւորվ պ. Տեմիրեանի նամակը, Եւրոպայում իրատարակելի հայկական խնդրոյն վերաբերված մի օրգանի մասին, որ պարոնը ի խրախուսութիւն գործի սկսելու յաջողութեանը, նախապէս՝ բաժանորդագրելու նկատել կը խնդրէ, որով ոչ սակաւ միջոցաւորական յոյսեր է խոստացվում մի այդպիսի անհրաժեշտ գործի փութով ձեռնարկութեան յաջողութեան, գուցէ ձեր միջոցաւ, մենք՝ ռուսաստանցի հայերս գոնեա ջանացած կը լինենք մասով չափ պ. Գլխորդի նպատակի իրագործութեան խրախուսելու, ուրեմն, ցանկաւ աւելի իրեն հայ, այդ աղբորութեան անհրաժեշտ գործի բարի իրագործութեանը, աչտու և մենք խնդրում ենք ձեզ, բարեհաճել նոյնպէս և միշտ այժմէն իսկ բաժանորդ նկատել յիշեալ լրագրին, գոնեա երկու օրինակ:

Գեորգ Աղլիեանց, Տ. Եփեսոսյ Աղլիեանց

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 29 մայիսի

Այսօր 29-ին պարոն Արսէն Թոխմանեանը մի հրապարակախօսութիւն արեց Արծրունու թատրոնում: Մենք, հայերս հեռի մեր ընկերակցի, շատ անգամ գրաված մեր առօրեայ նիւթական հարցերով, մոռանում ենք մտաբերել անգամ այն երկիրը, ուր մեր ազգի արմատն է ստեղծ, ուր մեր ազգը իր մանկութիւնը և իր հասուն շրջաններն է անցրել, ուր տեղի է ունեցել մեր ազգի ուրախութիւնը և սուգը, պատերազմը և կեանքը և ուր ազգը ուժաթափ դեգերում է այսօր ստրկութեան մէջ:

Այդ օրը և միայն այդ օրը պարոն Թոխմանեանցը, որ անձամբ անձին ճանապարհորդել է Հայաստան երկրում և գննել նրան զանազան տեսակետներից, մեր աչքի առաջ բաց արեց իր հարստութեան քարտէզը, որի վրա պարզ նկարված տեսանք Հայաստանի կենտրոնը՝ Վասպուրական աշխարհը իր վան քաղաքով և Մանազկերտ, ինտու և Բուլանդ գաւառները, նրանց աշխարհագրական դիրքը, նրանց բարեբեր հողը, նրանց ամենայն տեսակի հանքերը, մետաղի և անասնի, նրանց բնութեան գեղեցիկութիւնը, անտառները իրանց կենդանական բնակիչներով: Պարոն հրապարակախօսը ընդունակութիւն ունի մի քանի պարզ խոսքերով նկարել մի ամբողջ ազգի մտաւոր և բարոյական ախլը. նա մեզ տուեց զանազան գաւառները ազգաց վիճակագրութիւնը, որից երեւց հայերի անհամեմատ մեծ քանակութիւնը բոլոր այլ ազգաց վրա, միասին վերցրած, այն է՝ քրդերի, տաճիկների, ասորիների, հրէաների և չեքքեղների. նա ցուց տուեց մեզ հայի մտաւոր և բարոյական գերազանցութիւնը բոլոր այլ ազգաց վրա, վերջապէս նա ցուց տուեց Հայաստանի հայերի մէջ գտնված այն ինքնուրոյն և միանգամայն աւելի զարդ ու զօր, որ պահել է և պահում է հայ ազգութիւնը, որի շնորհիւ մենք այսօր ստույ միջոցաւ անհրաժեշտ ասում ենք թէ մենք ևս ազգ ենք, մենք ևս հայերնիք ունենք:

Եւ ներողութիւն եմ խնդրում պարոն հրապարակախօսից, որ ազճատում եմ նրա միանգամայն սակեայ դասախօսութիւնը, բայց և չեմ կարող չը խնդրել պարոնից, որ բարեհաճի մի գամ ևս դասախօսել և այս անգամ բանայ մեր առաջ այն բոլոր հարստութիւնը, որը զիջվել է նրա հայրենաւէր սրտի վրա. մանաւանդ որ շատերը որոնք հողով կը ցանկային լսել այդ բոլորը, մայիսի 29-ին անգիտակցաբար բացակայ էին:

Բ. Նաւասարդեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«ТНФМ. ОБЪЯВЛ.» լրագիրը հաղորդում է որ պ. պ. Ա. Կորգանով, Ա. Փրիգոնով և ֆիթսեով եղբայրները նոյնիցին 13,200 բուրլու երկու ըստիպեղեղա հաստատելու համար հիմնվելու կովկասեան համալսարանի մէջ կամ մի բարձրագոյն դպրոցի մէջ, որ կը հիմնվի Թիֆլիսում:

Այսօր 30-ի դիրքերը Գուրգայի մէջ հրդեհ եղաւ, որ ոչնչացրեց մի ամբողջ թաղի կէտը: Վնասները մեծ են, թէ և ճշգրտեամբ դեռ ևս յայտնի չեն: «Եսկօր» ապահովութեան ընկերութեան վնասը հասնում է 15,000 բուրլու գումարի: Միւս ընկերութիւնների վնասներն էլ ահային են: Հրդեհը սկսվեցաւ գիւղերվայ 3 ժամից:

Ս. Պետերբուրգի լրագիրները հաղորդում են որ կոմս Լօրիս-Մէլլեով ստանում է 26,000 բուրլու տարեկան ռոճիկ:

Երեւելի բժիշկ Պիրոգովի յօրեւանը Մոսկվայում շատ փառաւոր էր: Յօրեւանի ժամանակ ստացվեցաւ Թագաւոր Կայսրի հեռագիրը, որով Նորին Մեծութիւնը շնորհաւորում էր Պիրոգովին և յիշում էր նրա արած ծառայութիւնները ռուսաց զօրքին: Ներկայ էին այլ և այլ վարչութիւնների, համալսարանների և ընկերութիւնների ներկայացուցիչները, նոյնպէս ազատամիտ մասուլի պատգամաւորները և հրէայ-ռուս չորս օրգանների ներկայացուցիչները, որոնք ազգէս ներկայացրին Պիրոգովին: Ներկայացվեցան և ուրիշ շատ աղբիւններ: Պիրոգով մի ճառ ասեց, որի վերջը յայտնեց յոյսը որ Ռուսաստանը կը շարունակի ընթանալ վերանորոգութիւնների ճանապարհով, որ զմարդիւն էր անցնալ Թագաւորութեան ժամանակ: Մոսկվայի համալսարանի ղեկավարը մի ճառ ասեց համալսարանի ինքնավարութեան և համալսարանների մէջ մտքի ազատութեան անհրաժեշտութեան մասին: Երիտասարդութիւնը ոգեւորված կերպով ընդունեց այդ երկու ճառերը:

Շնորհակալութեամբ ստացանք «Երեւանի նահանգի բուսականութիւն» գրքից, աշխատասիրութիւն Գլխահան Ալեքսանդրի: Տպւած է Երեւանում, «Պատկ» լրագրի տպարանում, 1881 թւին: Գրքիցի գինը 50 կոպէկ է:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԲԱՆ

Թիւրքաց միւնիստրների խորհուրդը վճռել է առաջարկել սուլթանին, որ նա 40,000 կանոնաւոր զօրք ուղարկի Տրիպոլի տեղական զօրքերի թիւը շտապեցնելու համար: Բայց այդ կառաւարկին վարչական վերանորոգութիւնների Տրիպոլի վիլայեթի համար: Այս միջոցները հազիւ թէ կարողանան բարելաւել Բ. Կրան յարաբերութիւնները Ֆրանսիայի և Իտալիայի հետ:

«Daily Telegraph» լրագրին Կորֆուից հեռագրում են, որ Թիւրքաց զօրքերը հեռանում են Արտայից: Լարիսայի զօրքերը գնացին Սալոնիկի, իսկ սահմանների վրա եղած Թիւրքաց զօրքերը դէպի հիւսիս ուղեւորեցան: Այդ լուրերին հակասում են «Հափսա» ընկերութեան հեռագիրները, որոնք հաղորդում են, թէ Թիւրքերը շտապեալ ամբողջում են Արտա և Վօյո: Եւ նիւայի նահանգապետը գնացել է Պրիվեգա, որպէս զի համոզի տեղացիներին թշնամաբար վերաբերվել Յունաստանին:

Արգոն-Աղբիւն սպանման մէջ մեղադրված բոլոր անձինք կը դատվեն առանձին դատարանի մէջ, որ կազմված կը լինի Թիւրքաց բարձրատիման պետական մարզիկներից: Գատարանի նախագահ նշանակված է Բրուսայի նահանգապետ և նախկին առաջին միւնիստր Ալեքս-Վեֆիկ-փաշա: Գատարանը բաց կը կատարվի: Վեֆիկ-

փաշա Միտհադի աշխատակիցն էր Թիւրքաց սահմանագրութեան կազմելու ժամանակ և Թիւրքաց առաջին պարլամենտի նախագահը:

ԱՆԳԼԻՍ

Վերջին օրերում համայնքների ժողովի շինութեան անցքերը լինէն էին կանանցով: Դրա պատճառն այն էր, որ համայնքների ժողովը պէտք է քննէր կանանց ընտրողական իրաւունքների ընդարձակելը: Այդ առիթով Վեստմինստերի դաշխիճում մի ժողով կայացաւ, որի ժամանակ խօսեցին կանանց իրաւունքների ջերմ պաշտպան օրիորդ Լիդիա Բեկկեր և ուրիշ շատ օրիորդներ: Նրանք պահանջում էին ընտրողական իրաւունք տալ անկախ գրութիւն ունեցող կանանց, կամ այնպիսիներին, որոնք ընտանիքի մեծն են համարվում և ունեն այն բոլոր յատկութիւնները, որոնք Անգլիայի մէջ ընտրողական իրաւունք են տալի տղա-մարդկերանց: Այն օրը, երբ պէտք է քննելու կանանց ընտրողական իրաւունքի հարցը, համայնքների ժողովի այն բաժինը, որ հասարակութեան համար է յատկացրած, կանանցով լինէն էր: Որինադիժը առաջարկել էր Հիւզ Մեկոն, որ այդ օրը հիւսնուլութեան պատճառով չը կարողացաւ պաշտպանել իր առաջարկութիւնը և խնդրեց ժողովից յետաձգել օրինագծի քննութիւնը: Ղողովը կատարեց նրա խնդրքը և որոշեց օրինագիծը օտոնելից յետոյ քննել:

Իրլանդական կալուածական միութեան ժողովը կայացրել է հետեւեալ վճիռը: «Իրլանդական Ֆերմերներին մեծ չափերով արտաքսելը իրանց հողերից, արտաքսելու ժամանակ զինուորական ոյժի գործադրելը և իրլանդական միութեան առաջնորդների կալուածները վկայում են, որ կառավարութիւնը Իրլանդիայի մէջ զործադրում է արտաքս կարգի օրէնքները կալուածատէրերին պաշտպանելու և երկրագործներին հաւաքելու համար: Այս հիման վրա մենք հրաւիրում ենք Անգլիայի և Եւրոպայի մէջ բնակվող իրլանդացիներին, նոյնպէս և հայրենականներին համակողմ անդիւնացիներին ժողովրդական ցոյցեր կազմակերպել հասարակական կարծիքը արթնացնելու համար»: Այդպիսի առաջին ցոյցը տեղի կունենայ Լոնդոնում Հայդ-պարկի մէջ յունիսի 5-ին:

Կալուածական միութեան գլխաւոր առաջնորդներին կալանաւորելուց յետոյ միութեան գլուխն է անցել իրլանդական հոգեւորականութիւնը: Ինչտեղ կատարվում է մի Ֆերմերի արտաքսելը, այնտեղ գալիս են հոգեւորականները, առաջնորդում են ամբուխի և զգուշացնում են նրան ի զուր տեղ չը յարձակվել զօրքերի վրա: Հոգեւորականութիւնը կրկնակի նպատակ ունի՝ մի կողմից ժողովրդական շարժում կազմակերպել և միւս կողմից ցոյց տալ, թէ նա սանձաւ հարում է և չափաւորում է ամբուխի: Գլխաւոր օրինագծի մասին հոգեւորականները պանդան կարծիք են յայտնում, մի բանի մէջ նրանք համաձայն են, որ բոլոր միջոցները պէտք է գործադրել իրլանդական ժողովրդի բարօրութեան համար: Հոգեւորականութիւնը շատ գէպքում կարողացել է զգուշացնել և զսպել կատաղած ամբուխի շարժումը 12,000 իրլանդացիք հաւաքվել էին մի Ֆերմերի արտաքսելու ընդգիմարելու համար: Երբ 250 պոլիցիականներ մի փոքր զօրաբաժնի հետ կամենում էին արտաքսել Ֆերմերին, ամբուխը նրանց կատարելապէս քարկոծեց: Զինուորները

Թէպէտ մի քանի անգամ յարձակվեցան ամբոխի վրա, բայց ստիպված էին յետ քաշվել: Այս դէպքից երեւում է, որ իրականում զինվոր մէջ զործարարի արտաքին կարգի օրէնքները անօգուտ են: Ասում են, որ Վրլադապոստն և նրա միջնորդութիւնը բաւական են իրականացնելու մէջ կատարվող անկարգութիւնները, որովհետեւ նրանք վախեցնում են պարլամենտին և զրգում են նրան ընդունել կառավարութեան առաջարկած միջոցները:

ՅԻՄՆՍԻԱ

1870 թուականին Լօտ նահանգի սպանված կամուրները արձանի բացման ժամանակ Վահորի մէջ Վամբետտա ասաց հետեւել ճառը:

Մենք առանձնապէս պէտք է պատուենք նրանց, որոնք սպանվեցան անաշուղտութիւնների ժամանակ, որոնք թափեցին իրանց արիւնը, ոչինչ յոյս չունենալով: Պէտք է այս արձանը օրինակ լինի ապագայ սերունդների համար: Բայց հանգստացէ՛ք, սա պէտք է օրինակ լինի ոչ թէ յարձակողական, բախտախնդիր, կամ ուրիշ սեփականութիւնը իրացնելու ձգտող քաղաքականութեան, այլ ընդհանրապէս այս արձանը պէտք է ապացուցանի, որ մեզանից պատուած մարդիկը սպանվեցան այն պատճառով, որ ազգը կուրօրէն զցեց իրան մի մարդու ձեռքը:

Յիշեցնելով կուսակցութիւնների համաձայնութիւնը պատերազմի ժամանակ, Վամբետտա ցուցադրեց յայտնեց, որ այդ համաձայնութիւնը չը շարունակվեց կառավարչական ձևի հաստատելու ժամանակ:

Այդ համաձայնութիւնը այժմ հետզհետէ մերկանում է, չը նայելով անգործ կուսակցութիւնների ընդդիմադրութեանը, ասաց նա: Բայց չը մոռանանք անցեալի դասերը, ներողամիտ լինենք միմեանց վերաբերութեամբ: Այնպիսի դժբաղդութիւններ, որ մենք այժմ յիշում ենք, պատահում են ընդհանուր ժողովրդական մեղքերի պատճառով: Մի քանիսը մեղանշում էին թողութեամբ, միւսները լրբութեամբ և բռնադատութեամբ: Մեծամասնութիւնը մեղանշում էր աննիւթի անտարբերութեամբ դէպի հասարակական գործերը և ամենքն կրեցին իրանց պատիժը պատմութեանից և հասարակական կարծիքից: Այժմ մենք կրկնակի ազատութիւն ունենք, որ Ֆրանսիայի սուրբը որ և է բաղդախնդրի ձեռքին չէ կարող ներքին բռնութեան և անարդար տիրապետութիւնների դէմ դառնալ: Առաջին ազատութիւնը զինուորական ընդհանուր պարտադիր ծառայութիւնն է, իսկ երկրորդն այն փաստը, որ այժմ առանց ժողովրդական կամքի անկարելի է պատերազմի կամ խաղաղութեան հարցը վճռել: Հաւատացէ՛ք, որ զօրքերը Ֆրանսիայի գլխավոր հոգն են այն պատճառով, որ այդ զօրքերը ինքը Ֆրանսիան է, նրա երկտեսարեութիւնը և նրա ապագան: Բայց Ֆրանսիական ազգը հաստատ վճռել է պահպանել խաղաղութիւնը, որովհետեւ նրա մէջ պէտք ունի: Մի հաւատաք նրանց, որոնք ասում են, թէ դէպի պատերազմական պատերազմայուն զօրքերը փառաբանող են խաղաղութեան համար: Նրկարատե և ամուր խաղաղութիւնը հիմնված է զօրքերի դժի և նրա ազգային կազմակերպութեան վրա: Ինչ ուզում են ասեն, բայց դուք հաւատացէ՛ք խաղաղութեան հաստատ լինելուն: Նրկրի կառավարչները դուք էք և առանց

ձեր կամքի, առանց ազգի կամքի ոչինչ չի անուի: Հանրապետականները այն են ցանկանում, ինչոր Ֆրանսիան է ցանկանում, այսինքն խաղաղութիւն, ազատութիւն, առաջադիմութիւն և Ֆրանսիական ժողովրդի մտաւոր ոյժերի զարգացում:

Այս ճառը թէ Ֆրանսիայի և թէ օտար երկրների մէջ շատ լաւ տպաւորութիւն գործեց: Վերամտական լրագիրները այդ ճառը անուանում են մի ցոյց յօգուտ խաղաղութեան:

Վամբետտա իրան ցոյց տուած պատի մասին նկատել է, որ դա չէ վերաբերում իր անձնաւորութեանը, այլ ողբունքին, այն է հանրապետութեանը և որ Վամբետտային ցոյց տուած հասարակական համալրութիւնը պարտաւորեցնում է նրան՝ ժողովրդին աւելի մեծ եռանդով ծառայել:

Փարիզից հաղորդում են հետեւեալը: Հեռու չէ այն ժամանակը, երբ Փարիզի բուրժուազիան և Ֆրանսիական կառավարութիւնը կարծում էին, որ մի սատիկ լրագրական յօդուած, կամ հասարակութեան առաջ արտասանած արմատական մի ճառ կարող էին հասարակութեան համար վտանգաւոր լինել: Ամենքը համազօգն էին, որ մի անգործ խմբագիր, կամ մի անյայտ հրատարակիչ կարող էին «տախտիկութիւն ծագեցնել կառավարութեան դէմ»: Կամ «բնակիչների մէջ փոխադարձ տախտիկութիւն սերմանել»: Այսպէս էին անուանում այդ երկու յանցանքները, որոնց շնորհիւ չափազանց շատ տուգանք է վճարված և շատ մարդիկ են կալանաւորված:

Մի ժամանակ կառավարութիւնը վճռեց ուշադրութիւն չը դարձնել տպագրական և ժողովների մէջ արտասանած այդ նախադասութիւնների վրա: Ինչ էք անում, կանչում էին պահպանողականները, Փարիզի մէջ այսուհետեւ էլ ապրել չէ կարելի, բոլոր օրինաւոր մարդիկ կը փախչեն և մենք կենթարկվենք ամբոխի կամայականութեանը: Միևնորութիւնը տատանում էր, բայց պատգամաւորների ժողովը ստիպեց նրան այդ փորձն անել: Գրանից մի անսպասելի հետեւանք ստացվեցաւ. յայտնվեցաւ որ ոչ սատիկ յօդուածները և ոչ արտասանած ճառերը քաղաքական փոփոխ չեն ներկայացնում և որ նրանց հետաքրքրութեան պատճառը այն էր, որ նրանք արդիւրում էին: Մի տարի հազիւ անցաւ և ամենքը այն պէս ընտելացան այդ յեղափոխական ազդարարութիւնների և սօցիալական պրօգրամների հետ, որ ոչ ոք այլ ևս նրանց վրա ուշադրութիւն չէ դարձնում: Կարելի է հետեւեալ օրինակը բերել:

Նորբերու մա կայացաւ բանւորների կօնգրեսը, որ թէպէտ հրապարակական չէր, բայց ամենքը հիշաւ թեմաք կարող էին ներկայ գտնվել այդ ժողովին: Բացի այդ ժողովի մէջ խօսված ճառերը միւս օրը տպվում էին լրագիրների մէջ: Ժողովի ժամանակ զանազան ողբերկած քաղաքացիներ և կանայք իրանց ճառերով քորկծում էին հասարակութեանը և առաջարկում էին ամենատարածական ձևով ուսնակիւս անել հասարակական այժմեան կազմակերպութիւնը: Առաջին ժողովի ժամանակ ճառատ խօսները ոչնչացրին, խօսքով, ի հարկէ, հասարակական սեփականութիւնը, կրօնը, ժողովրդութիւնը և այլն, երկրորդ օրը յեղափոխութիւն յայտնեցին և քանդեցին ամեն բան, ինչ որ մնացել էր հին աշխարհից, իսկ երրորդ օրը նոր կառավարութիւն կազմեցին սօցիալական հիմունքների վրա: Ժողովի ժամանակ Վամբետտային անուանում էին «հաս աչքանի», մինիստր, «Ֆեր-

րիէն» անագնիւ և այլն: Այդ բոլորը կատարվում էր Օբերկապիթի թատրոնում, որի դռները երկու պօլիցիականներ էին կանգնած միայն ձեռի համար: Ոչ ոք ժողովի վրա ուշադրութիւն չը դարձրեց և նրա մէջ խօսողները ուրախ կը լինէին հալածվել կառավարութեանից հասարակութեանը յայտնի դառնալու համար, բայց նրանց ցանկութիւնները չը կատարվեցան:

Ուրեմն վերջիշեալ յանցանքները ոչինչ նշանակութիւն չունեն և նրանց պատճառով մինչև այժմ ի զօր տեղ միայն մարդկութեանց հալածում էին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լրագիրներին գրում են, որ յունիսի 1-ին Մայիցում խուզարկել են բազմաթիւ անձների տները, որոնց պօլիցիան կասկածել էր, թէ նրանք պատկանում են սօցիալ-դեմոկրատների թւին: Բայց ի բաց առնելով մի քանի անմեղ լրագիրներ, ցերեմանական հիմունքները քանդող ոչինչ չը գտան նրանց մօտ:

—«Моск. Вѣд.» լրագրին Սօֆիայից հեռագրում են, որ բոլշարական իշխանի կառավարութիւնը միջոցներ ընդունեց «Անկախութիւն» լրագրի դէմ պատասխանատու խմբագիրը բանտարկված է մամուլը ի չար գործ դնելու և իշխանի անձնաւորութիւնը վիրաւորելու պատճառով:

—Լճոցների լրագիրներին Սօֆիայից հեռագրում են, որ իշխան Ալեքսանդրի անձնական քարտուղար պ. Սոսիլով հրաժարեցրած է իր պաշտօնից իշխանական չըջարեականի սխալ թարգմանութեան համար բոլշարական լեզուով: Իշխանը այս օրերս երկու պատգամաւորութիւններ ընդունեց ազդեանքով քրիստոնեաներից և մահմետականներից: Ամեն օր զանազան պաշտօնական անձինք խնդրեցին են ներկայացնում, որոնց մէջ խնդրում են ազատ կացուցանել իրանց պաշտօններից:

—Ֆրանսիական լրագիրներին Մարդիկից հաղորդում են, որ սպանիական մամուլը յանձնաժողովը ի պատիւ օտար մամուլի մէկ նրաժարական բանկէտ տուեց, ուր ներկայ էին՝ նախկին մինիստր Կանովազ դէ-Կատտիլիո, քաղաքային խորհրդի անդամները, շատերը սպանիական զօրքի օֆիցերներից և ուրիշ անձինք, որոնք մասնակցում էին ի պատիւ Կալէթօնի լինելի տօնախմբութեան կազմվելու մէջ: Կանովազ այդ ճաշի վրա ասաց, որ հանձնարարում մարդուն պատուելու գլխաւոր ծառայութիւնը թագաւորին է պատկանում, որը հրճուանքով քաջալերեց տօնախմբութեան նախագիծը: Կանովազ դէ-Կատտիլիո ցանկացաւ, որ այդ յօդուածները միւս թիւնը յենակէտ դառնայ բոլոր կրթված ժողովուրդների մէջ: Վե՛ծ մարդիկը, ասաց նա, ամբողջ աշխարհին են պատկանում: Բոլոր մեծ գործերի ընդհանուր հայեցակէտը խոսելիքէցան է: Կալէթօնի յօդուածին առիթով մեր արտայայտած զգացմունքները դէպի ազգային միութիւնը մեր ունեցած ձգտումների ապացոյց են:

—Լրագիրներին մէջ կարդում ենք, որ Իրան-գիւղում օրից օր անկարգութիւնները մեծանում են: Գաւրլինում, օր ցերեկով, յարձակվեցան մէկ պօլիցիականի վրա, որը ձիով անցնում էր, առանց դէմքի, նրան ձիուց վայր գցեցին և հաւաքված ամբոխի մէջ ազդակներ էին լսվում, որ ժամանակ է քաջ ապստամբութիւն սկսել լրագրի տիրապետութեան դէմ: Կալէթօնի միութեան էլը երկու գործունեայ անդամներ կալանաւորված են:

—Վիեննայից, մայիսի 27-ին հեռագրում են, Կ. Պօլսից լուրեր են ստացված, որ սուլթանը հրամայեց զօրքերի հրամանատարին Էպիրոսում և Թէսալիայում առնուց ալլ և յալլութեան դատարկել Յունաստանի գիլած գաւառները: Բ. Գրան և Նիկիտոսի մէջ մեծ անբաւականութիւն է ծագել: Կ. Պօլսում կարծում են, որ երկպառակն խզվելը Նիկիտոսի անկախութիւնը կը հրապարակի:

—Լճոցներից լրագիրներին հեռագրում են, որ Իրանիայի արևմտեան մասում յեղափոխական շարժումը զօրեղանում է: Ժողովուրդը քանդում է հեռագիրները և կամուրջները: Զօրքեր են ու-

ղարկված այնտեղ կարգը վերականգնելու համար:

—Յունիսի 4-ին Փարիզում կատարվում էր Լիտէի թագուած: Հանգուցեալ յուզարկաւորութեանը, հասկանալի է, որ մասնակցում էին զիտութեան և զրականութեան մէջ յայտնի անձինք և բազմաթիւ պատգամաւորութիւններ գաւառական ընկերութիւններից: Կաղաղի ետեւից դուրս գաղմաթիւ հասարակութեան մէջ նկատելի էին՝ մինիստրների խորհրդի նախագահ պ. Ժիւլ Ֆէրրի, արտաքին գործերի մինիստր պ. Բարտուլէմի Սենտ-Յիւր, ներքին գործերի մինիստրի ներկայացուցիչ պ. Կազէլ, սենատի նախագահ պ. Լէօն Սէ, բազմաթիւ սենատորներ և զինական ընկերութիւնների անդամներ, «Revue de philosophie positive» ամսագրի խմբագիրներ և ուրիշներ: Կաղաղը տանից դուրս բերելու ժամանակ, 76-օրը դնդի բառարկօնը, ունենալով առջից երաժշտութիւն, սգի զօրակով, զինուորական սպաններ տուեց հանգուցեալին:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Ն Ի Ց

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԻ 2 յունիսի երէկ հասաւ Ս. Պետերբուրգ Սերբիայի իշխան Միլան, շատ պատուաւոր ընդունելութիւն գտաւ և իջաւ ձմերային պալատի մէջ: Հանելուց յետոյ շուտով այցելեց Պետրօպօլիսի մայր եկեղեցին, Թագաւորի գերեզմանի վրա դրեց արծաթեայ պսակ, իսկ Թագուհու գերեզմանի վրա թարմ ծաղիկներից պսակ: Ներկայ էր հոգեհանգիստին: Այսօր ուղևորվում է Գատչինօ Թագաւորին և Թագուհուն ներկայանալու համար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԻ, 2 յունիսի: Պետական բանկի 50% տոմսը առաջին շրջանի արժէ 96 ռ. 75 Կ., երկրորդ 94 ռ. 62 Կ., երրորդ 94 ռ. 50 1/2 Կ., չորրորդ 94 ռ. 50 Կ., ներքին 50% առաջին փոխառութեան տոմսը արժէ 225 ռ. 50 Կ., երկրորդ 218 ռ. 50 Կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսը արժէ 93 ռ. 12 Կ., երկրորդ 93 ռ. 12 Կ., երրորդ 92 ռ. 87 1/2 Կ., սակի 8 ռ. 9 Կ.: Ռուսաց 1 ռուբլ Լճոցների վրա արժէ 24,43 պէնս, Ամստերդամի վրա 123 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 209 մարկ 25 պֆ., Փարիզի վրա արժէ 258 ֆրանկ: Բօրսայի արտադրութիւնը հանգիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԷ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«Ի Ե Ն Թ Ը»

ԱՐԿԱՐՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐԿԱՆ ՊԱՏԵՐԱՋՄԻՑ ՀԵՂԵՆԱԿՈՒԹԻՒՆ ՐԱՅՏԻՒ

Հալած մաքուր լիզի վրա, զիբը բաղկանում 400 երեսից: Թիֆլիսում ծախվում է «Մշակ» խմբագրատանը, «Կենտրոնական գրադատաւանդում», «Կովկասեան գրաւ փառաւանդում» պ. Զաքարիա Գրիգորեանցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բօզարջանցի, Հովուեանցի ծխախոտի մաղաղիններում:

Գինն է 1 ռուբլ 20 կօպ:

ԶԱՐԿԱՆԱԼԻ ԷԺԱՆ ԳՆՈՎ Ծախվում է արտասահմանի շտապնիական ՑԵՄԵՆՏ Փօթիի մէջ Ելիսբար ԲԱԲԱԼՈՎ Ի մօտ, Գուլայիսի մէջ ԿՈՒՐՑՈՎ Ի մօտ: Նոյնպէս ծախվում են չափաւոր գներով ԲՆԱԿԱՆ ՄԵՂՐԱՄԱՐԵՐ սեփական գործարանից, ԹԻՖԼԻՍՈՒՄ Սիօնիկայա փողոցի վրա, ԳՈՒԹԱՅԻՍՈՒՄ և ԳՈՐԻՈՒՄ:

ԻՎԱՆ ԿՈՒՐՑՈՎ, 8—11 (2)



ՎԱՐՇԱՎԱ Իր յատկութիւններով մարմնի մասերի և մանաւանդ ոտքի մասերի քրտինքից առաջ եկած փտումն ոչնչացնող յայտնի նիւթը.



ԳԱԼՄԱՆԻՆ

անուով ծախվում է Եւրոպայի բոլոր մեծ քաղաքների և գեղատների և գրողների մօտ: Գլխաւոր դէպք նիւթի հնարող Ֆարմացիի մագնատըս **Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ**ի գեղատան մէջն է գտնվում: Վարշավայում, Լեզկտորայի փողոց № 35. Գլխաւորների մեծ արկղիկը արժէ **Վարշավայում** 50 կոպ., աւելի փոքրը 30 կ. պէտք է զգուշանալ խորախումբներից և պահանջել, որ իւրաքանչիւր արկղիկը ունենայ գործածութեան մեխանիզմը և փարիզի աշխարհահռչակ մեղաները: **Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ** 6—20 (1)

Թիֆլիսի հայոց ծխական ուսումնարանների ներկայ 1881 թ. տարեկան հարցաքննութիւնները

Մայիսի 22 և 23-ին	Կաթողիկէ Ս. Գէորգ եկ. ուսումն.
" 25-ից—30-ը	Հաւարարի Մարիամեան օր. ուսումն.
" 28 և 29-ին	Կոնկիւթ Թանգոյեան օր. ուսումն.
" 30-ին	Հաւարարի Ս. Մինաս եկ. ուսումն.
Յունիսի 1 և 2-ին	Կոնկիւթ Ս. Աստուածածին եկ. ուսումն.
" 3 և 4-ին	Ջորաշէն եկ. ուսումնարաններում:
" 5-ին	Շամբուկցոց եկ. ուսումնարանում:
" 6-ին	Ջորաշէն Ս. Գէորգ եկ. ուսումնարանում:
" 8-ին	Ս. Կարապետ եկ. ուսումնարանում:
" 9-ին	Չուղուրէթի Ս. Աստուած եկ. ուսումնարաններում:

Թեմական վերատեսուչ Բարխուդարեանց

Ա Ն Գ Լ Ի Ա Կ Ա Ն Մ Ա Գ Ա Ջ Ի Ն Ո Ւ Մ

Համեմատեցէք թէյի ֆունտը	1 ռ. 5 կ.	Մակկայից բերվող թէյի հետ	Ֆ. 1 ռ. 30 կ.
—	1 ռ. 10 կ.	—	Ֆ. 1 ռ. 40 կ.
—	1 ռ. 20 կ.	—	Ֆ. 1 ռ. 60 կ.
—	1 ռ. 40 կ.	—	Ֆ. 1 ռ. 80 կ.
—	1 ռ. 60 կ.	—	Ֆ. 2 ռ. —
—	1 ռ. 80 կ.	—	Ֆ. 2 ռ. 50 կ.
Ամենաւաւր	2 ռ. —	—	Ֆ. 3 ռ. —

86—100

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏՏԵՐ**, մաշկեր ամրացնող և նրանց բնական գոյնը վերադարձնող: Գինը 2 ռ. շէշը, **ՓՈՍՏԱՅՈՈՎ** ուղարկված 2 ռ. 49 կոպ.: **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ:



Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻՒՂ**, մաշկեր ամրացնող համար, 1 ռ. ամանը փաթէի գլխաւոր գէմ, **ՏՈՒԱԼԻՏԻ ՍԱՊՈՆ** և հոտաւէտ ջրեր և այլն: 74—100

ԱՄԱՐԱՆՈՅՆԵՐ

Տփլիսից,—մօտ 8 վերստ հեռաւորութեամբ,—**ԱՄԱՐԱՆՈՅՆՈՒՄ** փոքր Լիւլլի մօտ, —վրաց խոթեղայի կէս ճանապարհի վերջ տրվում են վարձով երկու **ԱՄԱՐԱՆՈՅՆԵՐ**, իւրաքանչիւրը՝ երեք սենեակից բաղկացած իւրեանց առանձին խոհանոցներով: Գնի մասին կարելի է հարցնել տիրոջը—**Ջաք**. Գրիգորեանցին—նորա գրախանութումը:

3—10

ԱՌԵՏԻՍԱԿԱՆ ՏՈՒՆ

ՊՈՊՈՎ Կ. և Ս. ԵՂԲԱՅՐՆԵՐԻ Մ օ ս կ վ ա յ ի մ է շ: Պատիւ ունենք յայտնել ընդհանրութեանը, որ ներկայ տարուայ յունիսի 2-ից Թիֆլիսի մէջ, Գալովինսկի պրօսպեկտի վրա, Միրիմանովի տանը կը բացանենք մեր մաշկալիւր, ուր կը վաճառուի թէ մեծ և թէ փոքր քանակութեամբ (оптовая и розничная продажа) մեր ֆիրմայի չալ (թէյ) կը շուռած Մօսկվայում մեր տանը, մեր անձնական հսկողութեան տակ: Բացի թէյից Թիֆլիսի մեր մագազինում կը մանրավաճառուի նոյնպէս շաքար և զովա:

4—5

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ (աթոռներ և բազմոցներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջին փողոցում Կատարիկաց փողոցի անկիւնում Մի. **ԲԱՅԵԼ ՏԵՐ-ՆԻԿՈԼՈՍՏԵԱՆԻ** պահեստում:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցեով. **Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.**

12—150

Արդէն ուղարկեցաւ իւր բաժանորդներին **ԲԱՅՅԻԻ ԽԵՆԹԸ**՝ անու. նով վիպասանութիւնը: Նոր գնել ցանկացողներին խորհում ենք դիմել ՇՈՒՇԻ, կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահմադ-Յախթեանցի տպարանը: **ԲԱՅՅԻ** պ. Ալեքսանդր Թարխանեանցին, **ԹԱՐԱԼԵՋ**՝ պ. Գրիգոր Բէջանեանցին. Հրատարակչի հասցէն. **Шуша, въ конторѣ Арунянца АБЪЛУ АП-РЪСЯНЦУ.**

2ը նոյնիւր մաքսերի աւելանալուն ապրանքները առաջվայ գներով կը ծախվեն. **ԿՈՆԳՈ-ԹԵՅ 1 ռ. 5 կ. և 1 ռ. 10 կոպ.**, շատ լաւ **ՄՕՆԻՆԳ 1 ռ. 20 կ. և 1 ռ. 40 կ.**, հիանալի **ԿԱՅՍԱՌԻ 1 ռ. 60 կ. և 1 ռ. 80 կ.** և **ԱՄԵՆԱԼԱԻ ԹԵՅ 2 ռ.** առանց թղթի: Անգլիական բէզովները 4 ռ.—40 ռ. և հրացաններ 20 ռ.—200 ռ. Անգլիական խանութի մէջ: Գործակալութիւն **ԲԱՐՆԱՐԻԻ ԹԱՄԲԵՐԸ**, ջօնսօնի **ԿՈՂՊԵՔՆԵՐԸ**, Տուրքի ԳՐԻՉՆԵՐԸ և էկստրակտ կախօշօկալի ծախելու համար, որոնք փարիզի հանդիսի ժամանակ ոսկէ մեղալ ստացան: **ՀՈՏԱԼԻՏ ԹԵՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԵՅԱՄԱՆՈՎ 1 ռ. 65 կ. և ամենաւաւր 2 ռ. 30 կ.:** Ամառականներին օգտաւէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ: Ամբողջ հազուստ 15 ռ., կօֆեկաններ հազի գէմ 60 կ. ֆունտը: 84—100

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ

ТУРЕЦКИХЪ АРМАНЪ.»

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ ՔԱՆ ԹԵ ՈՒՐԻՇ ՏԵՂ. Մուրաբաներ, կօֆեկաններ, **ԿԱԿԱՍ**, բրինձ, **ԱՄԱՆԵՎԻՆ**, բօկալներ, թափեր, երես լուռնալու ամաններ, չայիկներ, **ԲԱԺԱԿՆԵՐ**, կերակրի ամաններ (судки), մատուցարաններ, **ԿՈՂՊԵՔՆԵՐ**, **ԴԱՆԱԿՆԵՐ**, գզալներ, **ԳՐԻՉՆԵՐ**, թուղթ, մատիտներ, տետրակներ, **ՀՐԱՑԱՆԵՐ**, **ԲԵՂՈՂԵՐՆԵՐ**, պրօմէներ, **ՄԱՀԱՍԱԼՆԵՐ**, **ՀԱԳՈՒՅՏ**, տրիկո, պարուսին, թաշկինակներ, երկարիկներ, կրօնկա, դուրաններ, **ԹԱՄԲԵՐ**, **ՊՈՐՏ-ՎԵՅՆ**, խեբօս, կօնեակ և այլն: Թէ՛ք մեծ քանակութեամբ **ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ** համար **ՊՈՒԿԸ 44 ռ., 46 ռ., 48 ռ., 50 ռ., 52 ռ., 54 ռ.,** և այլն: Այլ բոլոր կարելի է գտնել **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ.** Մի և նոյն տեղը էփան դնով. **ՇԵՐԲԵՏ** մաշկեղան, խոր ծԱՐԱԻՆ գէմ, **ԽԻՆԱՅԻ** գինի ջրամի գէմ, կարթուրան **ՓՈՇԻ**, հեղուկ և **ՍԱՊՈՆ**, բժշկական թուղթ փաթեթիկների համար, պարսկական փօշի: 8—100

ՄԵԺԵՎՈՒ ԻՆԺԵՆԵՐ ՍԵՐԳԵՅ ԻՎԱՆՈՎԻՉ ԲԱԳԱՏՈՒՐՈՎ ընդունում է կազմել **ՅԱՏԱԿԱԳԵՐ**

(պլաններ, գծագրներ, պրօֆիլներ, կատարում է կալուածների, հողերի և անտառների բաժանումն զնահատողական դիտական հիմունքների վրա, կատարում է ընդօրինակումներ (съемки) և հարվաչափութիւններ (нивеллировка) **ԲԱԺԱՆՈՒՄ** Ե. ԱՆՏԱՌՆԵՐԸ կանոնադրապէս գործածելու համար, զնահատում է հողերը, խորհրդներ է տալիս երկրաչափական և կալուածական գործերի վերաբերութեամբ և մի և նոյն ժամանակ կալուածական գործերի մէջ մասնագէտ լինելով իրաւաբանական, տեխնիկական և անտեսական կողմերից, պատրաստ է որ և է հիմնարկութեան հաւատարմատար լինել կալուածական և երկրաչափական գործերի համար: **ՀԱՍՏԵՆ** և **ՊԱՅՄԱՆՆԵՐԸ** թողնել **ՄԵՎԱԿ**՝ խմբագրատանը: 5—10